

մերումս երկրի ի մեր վիճակս՝ Փոսանգ դաւանութեամբ քրիստոնեայք շատ կան . մեք՝ յիւրեանքբան շենքասել . քաւ լիցի . այլ իբրեւ զեղբարս ընդունիմք եւ պատուեմք . այլ եւ եկող պատրիքն երբ առ մեզ կու գան , որչափ մեր կարս է՝ պատիւ եւ մեծարանս կ'առնեմք , վասն սիրոյն Քրիստոսի¹» :

Այս հանդուրժողական հոգին աչքի կը զարնէ Մովսէս կաթողիկոսի կեանքին մէջ . նոյն հոգւով զբուած են նաեւ հետեւեալ տողերը , ուղղուած առ Աւգոստինոս Բաջենց Նախիջևանի հայ Միաբանողներու արքեպիսկոպոսը . «Դու գիտակ ես որ մենք ձեր պատրոնց որչափ հարկիս հանեմք : Այլ խնդիրք մեր ի քեզանէ այս է որ . . . հրամանքդ զահմաթիս , գրես առ Փափն եւ ծանուցանես մի ըստ միտջէ զմեր լաւութիւնն որպէս գիտակ ես» (տե՛ս վերը էջ 278) :

Իր վերաբերմունքը դէպի լատին առաքեալները եւ Երնջակի կաթողիկէ Հայերը եղած է միշտ եղբայրական : Երբ խօսքը դարձած է երկու եկեղեցիներու դաւանարանական կամ ծիսական խտրութեանց չուրջը , ջանացած է ինքը խոհեմութեամբ եւ իմաստութեամբ ցրուել թիւրիմացութիւնները , որոնք մէկ կամ միւս կողման մէջ այս կամ այն կէտի նկատմամբ գոյութիւն ունեցած են , եւ կամ լուծումը սիրոյ մէջ գտնել :

Մովսէս եպիսկոպոսական ձեռնադրու-

¹ Կամենից , էջ 243 :